ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ

(Վերախմբագրված հրատարակություն)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՔԱՌՅԱԿՆԵՐ
ԲԱԼԼԱԴՆԵՐ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2018

ՀՏԴ 821.19-8Թումանյան
ԳՄԴ 84(5Հ)
Թ 950

Թումանյան Հովհաննես
Թ 950 Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով/
Հովհ. Թումանյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի
անվան գրականության ինստիտուտ, 2018.
Հատոր երկրորդ: Քառյակներ, Բալլադներ,
Թարգմանություններ.- 687 էջ:

ՀՏԴ 821.19-8Թումանյան
ԳՄԴ 84(5Հ)

Հատորը հրատարակվում է Հովհ. Թումանյանի եղբոր՝ Վահանի ծոռան՝ Կարեն Վարդանյանի ընտանիքի և նրա կողմից հիմնադրված «Արմենիան հելիքոփթերս» ՍՊԸ ավիաընկերության հովանավորությամբ:

ISBN 978-9939-1-0844-5
© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2018

Հովհաննես Թումանյանի տասը հատորով երկերի լիակատար ժողովածուի վերահրատարակման խմբագրական կոլեգիայի կազմը

(ցանկը բերվում է այբբենական կարգով)

Խմբագրական խորհրդի նախագահներ՝ *Դևրիկյան Վարդան, բ.գ.դ., Թուխիկյան Նարինե,* ***տեղակալ՝*** *Կիրակոսյան Վլադիմիր, բ.գ.դ., պրոֆ.,* ***պատասխանատու քարտուղար՝*** *Եղիազարյան Անի, բ.գ.թ.*

Աբեղյան Հասմիկ, բ.գ.թ., Ավետիսյան Զավեն, բ.գ.դ., պրոֆ., Դոլուխանյան Ալիտա, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Եղիազարյան Ազատ, բ.գ.դ., պրոֆ., Իսահակյան Ավետիք, բ.գ.դ., պրոֆ., Հովհաննիսյան Սուսաննա, բ.գ.դ., Մարգարյան Սիրանուշ, բ.գ.թ., դոցենտ, Մկրտչյան Նունե, բ.գ.թ., դոցենտ, Մնացականյան Եվա, բ.գ.թ., դոցենտ, Մուշեղյան Ալբերտ, բ.գ.դ., Մուրադյան Սամվել, բ.գ.դ., պրոֆ., Որսկանյան Հերիքնազ, բ.գ.թ., Սուվարյան Յուրի, ակադեմիկոս

Վերահրատարակության բնագրերը պատրաստեցին՝
Հասմիկ Աբեղյանը և Անի Եղիազարյանը
Ծանոթագրեցին՝ *Հ. Աբեղյանը, Վ. Դևրիկյանը և Վլ. Կիրակոսյանը*

Հատորի խմբագիր՝ *Վլ. Կիրակոսյան*

ԳՄԴ 84Հ7
Թ 950

Տպագրվում է ՀՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա

Էդ. Մ. Ջրբաշյան (գլխավոր խմբագիր), Խ. Մ. Գյուլնազարյան,
Թ. Հ. Թամանյան, Լ. Մ. Կարապետյան, Լ. Հ. Հախվերդյան,
Գ. Հ. Հակոբյան, Հ. Կ. Հովհաննիսյան, Ս. Ն. Սարինյան

Բնագիրը պատրաստեցին և ծանոթագրեցին
Հասմիկ Աբեղյանը և Անահիտ Չարենցը

Ներածական հոդվածները՝ Էդ. Մ. Ջրբաշյանի

Հատորի խմբագիր՝ Խ. Մ. Գյուլնազարյան

ОВАНЕС ТУМАНЯН
ПОЛНОЕ СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ
в десяти томах
Том второй
Четверостишия, Баллады, Переводы
(на армянском языке)
Издательство АН Армении
Ереван 1990

© Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1990
Ծանոթագրությունների և ներածականի համար

ՔԱՌՅԱԿՆԵՐ

I

1890

* * *

Անց կացա՛ն...
Օրերս թըռան, անց կացա՛ն.
Ախ ու վախով, դարդերով
Սիրտըս կերան, անց կացա՛ն։

* * *

Վերջացա՛վ...
Կյանքըս մաշվեց, վերջացա՛վ.
Ինչ հույս արի՝ փուչ էլավ,
Ինչ խընդություն՝ վերջը ցավ։

1916

* * *

Հիմի բացել են հանդես
Երգիչները իմ անտես.
Ջա՜ն, հայրենի ծըղրիդնե՛ր,
Ո՞վ է արդյոք լըսում ձեզ։

Հունիս

* * *

Ետ չեկա՛վ...
Գընա՛ց, գընա՛ց, ետ չեկավ,
Անկուշտ մահին, սև հողին
Գերի մընաց, ե՛տ չեկավ։

Հունիս

* * *

Ո՞ւր կորա՜ն...
Մոտիկներըս ո՞ւր կորա՜ն,
Ինչքան լացի, ձեն ածի՝
Ձեն չի տըվին, լո՜ւռ կորան։

Հունիս

1917

* * *

Երկու դարի արանքում,
Երկու քարի արանքում,
Հոգնել եմ նոր ընկերի
Ու հին ցարի արանքում։

Հունվարի 15

* * *

Ծով է իմ վիշտն՝ անափ ու խոր՝
Լիքն ակունքով հազարավոր.
Իմ զայրույթը լիքն է սիրով,
Իմ գիշերը՝ լիքն աստղերով։

Փետրվարի 9

* * *

Քանի՛ մահ կա իմ սրտում,
Թափուր գահ կա իմ սրտում.
Չէ՞ դու էլ ես մահացու.
Մահի ահ կա իմ սրտում։

Նոյեմբերի 7

* * *

Կյանքից հարբած անցավոր,
Ահա դարձյալ անցավ օր,
Դու վազում ես դեպի մահ —
Մահը բըռնում հանցավոր։

Նոյեմբերի 10

* * *

Ետ եկե՛ք...
Գարնան վարար գետ եկե՛ք,
Անցած օրե՛ր, խինդ ու սե՛ր,
Դարձե՛ք, իրար հետ եկե՛ք։

Նոյեմբերի 11

* * *

Հին աշխարհքը ամեն օր
Հազար մարդ է մըտնում նոր,
Հազար տարվան փորձն ու գործ
Ըսկըսվում է ամեն օր։

Նոյեմբերի 11

* * *

Զուր եմ փախչում, ինձ խաբում,
Հազար կապ է ինձ կապում.
Ամենքի հետ ապրում եմ,
Ամենքի չափ տառապում։

Նոյեմբերի 12